ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝** Սամվել Խանվելյան՝ ՀՀ ֆինանսների նախարարության պետական պարտքի կառավարման վարչության պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝** Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, ք. Լոնդոն, 2024թ. հունիսի 5-ից 8-ը

3. **Հրավիրող կողմը՝** Ջեյ Փի Մորգան:

4. **Գործուղման նպատակը՝** (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ Մասնակցություն «Սահմանային շուկաների ֆիքսված եկամտով գործիքներ» խորագրով համաժողովին և դրա շրջանակում ոչ գործարքային իրազեկման արշավի իրականացում:

5. **Քննարկված թեմաները՝** Հանդիպումների ընթացքում միջազգային կապիտալի շուկայի մասնակիցներին ներկայացվել է շնորհանդեսային նյութը, որը բաղկացած էր հետևյալ բաժիններից.

   1) Նախաբան (երկրի նկարագրությունը և հիմնական շեշտադրումները),
   2) Կառուցվածքային բարեփոխումները,
   3) Մակրոտնտեսական քաղաքականությունը,
   4) Հարկաբյուջետային շրջանակը և պետական պարտքը,
   5) Արտաքին հատվածը,
   6) Դրամավարկային քաղաքականությունը,
   7) Բանկային համակարգը:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝** Համաժողովի շրջանակներում իրականացվել են ինչպես անհատական, այնպես էլ խմբային հանդիպումներ միջազգային կապիտալի շուկայում գործող մոտ 30 խոշորագույն

ակտիվների կառավարիչների, ներդրումային ընկերությունների ներկայացուցիչների հետ: Նաև նախատեսված էր Հայաստանին նվիրված առանձին պանելային քննարկում ներդրողների լայն շրջանակի հետ: Քննարկումներին ներկայացվել է շնորհանդեսային նյութը, այնուհետ հանդիպումներն ընթանում էին ակտիվ հարց ու պատասխանի ռեժիմով: Ներդրումային ընկերություններին հետաքրքրող հիմնական հարցերը վերաբերում էին մակրոտնտեսական և դրամավարկային ցուցանիշներին, հարկաբյուջետային և պարտքային քաղաքականությանը, բարեփոխումներին, տարածաշրջանային զարգացումներին: Գրեթե բոլոր ներդրումային ընկերություններն ունեին դրական ընկալում Հայաստանի և նրա վարած տնտեսական քաղաքականության վերաբերյալ:

Այցի շրջանակներում հանդիպել եմ նաև Բլումբերգ գործակալության ներկայացուցիչների հետ՝ քննարկելով իրենց կողմից առաջարկվող նոր գործիքների, էլեկտրոնային հարթակների ներդրման հնարավորությունը Հայաստանի ֆինանսաբանկային համակարգում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպումների շրջանակներում որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել: Պայմանավորվածություն է ձեռք բերվել ներդրողներին շարունակաբար տեղեկացնել Հայաստանի զարգացումների վերաբերյալ՝ թարմացված շնորհանդեսային նյութի պարբերաբար առաքման միջոցով:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Ներդրողների հետ կանոնավոր կերպով սերտ համագործակցության կարևորությունն ամրագրված է ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 16-ի <<Կապիտալի շուկայի զարգացման ծրագիրը հաստատելու մասին>> N1202-Լ որոշմամբ: Այն ենթադրում է ներդրողներին ուղղված ակտիվ միջոցառումների իրականացում՝ պարբերական իրազեկման արշավների, շնորհանդեսների և այլ գործիքների միջոցով:

Համաժողովին մասնակցությամբ կապիտալի միջազգային շուկայի ներդրողների հետ հանդիպումները բարձրացրեցին Հայաստանի ճանաչելիությունը, ամրապնդեցին արտաքին շուկաների հասանելիությունը Հայաստանի համար և պարտքային ներքին շուկայի հասանելիությունը՝ արտաքին ինստիտուցիոնալ ներդրողների համար: Այն կարող է դրական ազդեցություն ունենալ ներդրողների կողմից երկրի ռիսկի գնահատման տեսանկյունից:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Սամվել Խանվելյան

10.06.2024թ.